Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 3
«ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-23/07» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Գյումրի 21.08.2023թ.
Ժամ 11:00

Նիստին մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ալեքսանյան (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Պետրոսյան (ԳՊ/ԳԱ),
Զ. Մուրադյան (ԳՊ/ԳԱ),
Բացող անդամներ՝ Ա. Դավթյան (ԳՊ/ԲԱ),
Ի. Ջանոյան (ԳՊ/ԲԱ):
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հարությունյան (ԳՊ/ՄՀՄ):

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Ա.Ալեքսանյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1) Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) «ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-23/07» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի կասեցման, շտկումների գնահատման մասին
3) Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
4) «ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-23/07» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
5) Հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-23/07» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի կասեցման, շտկումների գնահատման մասին

(Ա.Ալեքսանյան)

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 41-րդ կետով, «ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-23/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով և հանձնաժողովի քարտուղարն այդ մասին սույն թվականի օգոստոսի 18-ին (Armeps) համակարգի միջոցով ծանուցել է մասնակիցներին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

2.2 «ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-23/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցներ՝ «Սերգեյ Հարությունյան» ԱՁ-ն և «ԱՈՒՏՈԷՔՍՏՐԱ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

(Ա.Ալեքսանյան)

«ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-23/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մրցույթի հրավերով սահմանված կարգով «Սերգեյ Հարությունյան» ԱՁ-ի և «ԱՈՒՏՈԷՔՍՐԱ» ՍՊԸ-ի փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. «ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-23/07»ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա.Ալեքսանյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

4.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «ՀՀ ՇՄԱ-ԳՀԾՁԲ-23/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի նվազագույն գնային առաջարկ և բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից ճանաչել «ԱՈՒՏՈԷՔՍՐԱ» ՍՊԸ-ին:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

4.4 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի դրույթներով՝ անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել ընտրված մասնակցին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա.Ալեքսանյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում, Գ. Նժդեհի 16 հասցեով:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Ալեքսանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Պետրոսյան

_____ Զ. Մուրադյան

_____ Ա. Դավթյան

_____ Ի. Ջանոյան

Քարտուղար՝ _____ Ա. Հարությունյան